

# Երեքսուշ



5

(176)  
Մայիս, 2021

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ` ՀԱՂԹԱՆԱԿԻՆ ՌԻՂԵԿԻԾ



Գեղարվեստական պատկերները Հրանուշի «Ընդմիջտ հաղթելու ենք» գրքում

Հեռանում, բայց չէր ծուլվում մթին...  
Թվաց, թե խավարի մեջ մի լույս է քայլում: Թվա՞ց...  
Հրանուշ

Հրանուշի «Ընդմիջտ հաղթելու ենք» գիրքը հայ ժողովրդի գավակների հերթական, անբեկանելի հերոսացումների ժողովածու է, որ կարելի է պայմանականորեն անվանել փոքրածավալ վեպ իր ամբողջության մեջ: Որպես այդպիսին էլ դիտարկվում է այն իբրև մեկ ստեղծագործություն՝ առանձին դրվագներով՝ յուրաքանչյուր հերոսական ձակատագրին առանձին ու յու-

րովի անդրադարձներով: Այս առումով, ինչ տեսանկյունից էլ դիտարկենք ստեղծագործությունը, անհերքելի է արծակ թե չափածո բանաստեղծության առկայությունը: Երբ հեղինակի տողերն են մարտի թեժ պահերից առաջ ստեղծում նախատրամադրություն, մերթ իրենք հերոսներն են վրձնում օրերի «երաժշտությունը», հաղթանակի բերկրանքն ու կարոտը յուրաքանչյուրն իր չափով, մերթ էլ պոեզիան արթնանում է էջերի հետզոտության մեջ՝ հրաշքի, անհավանականի, անեղծվածայինի տեսքով: Ահա մի քանիսը. «...Կարոտս բախվեց քո քար կարոտին. // Գուցե կարոտդ մոռացե՞լ է ինձ...»: «Ծառերը... ամբողջապես անտերև, չորացած ճյուղերը երկինք էին պարզել... Ծառերի տակ թափված ոչ մի տերև չկար... Սաղարթներն ասես երկինք էին հառնել... Ինչպե՞ս, ինչո՞ւ...»:  
Ապա ճանապարհի դեպի բաց երկինք կամ հավերժի բարձունքներ. բանաստեղծությունն այնտեղ ևս ուղեկիցն է յուրաքանչյուր մտքի, դեռ ավելին, ճամփան է հարթում մտքերից ակունքվող ծանր, ծանրագույն տողերի: «Կխտարի պես ոտքի տակ է տալիս լեռներն ու ժայռերն այնպիսի թեթևությամբ, ասես չի զգում հողը, կարծես ճախրում է արծվի նման: Ինքն էլ չգիտի՞ եղնի՞կ է, թե՞ արծիվ, գուցե երկուսը միաժամանակ»:  
Եվ տողերը մեկ հայրենիքին սիրո խոստովանության են տա-

նում, մեկ բնության մի պատանիկն է կենդանանում ու շունչ առնում:  
«Երբ ամպե օվկիանը մտափոխվի, մի տեղ բարեբեր անձրև դառնա, մի տեղ կարկտածե՞ծ անի, մի տեղ ծաղկաթերթեր թափի բռունցքաչափ փաթիլների տեսքով, ի՞նչ կա որ, այդպես էլ է լինում, որպես սիրահարության նշան երկիրը նորից կերևա իր բյուր հմայքներով: Կամ «Այստեղ լեռները բարձրանում, ձգվում են երկինք, այստեղ երկինքը խոնարհվում, համբուրում է երկրի փեշերը»:  
Այսպես, ուշագրավ պատկերային զուգորդումներ է ստացել հեղինակը համադրելով բնական բարձունքների արթայի՝ արծվի սլացքը հայոց աշխարհի հերոս գավակներից մեկի վերադարձի իրողությանը, վերադարձ դարոց անվանակոչելու տեսքով:  
«Պատիվ ունեն», - լայն ժայռում է Լալվարը: // «Պատիվ ունեն», - խշշում է գետը Դեբեդ: // «Պատիվ ունեն», - հպարտանում է ճռճկանը:  
«Արծիվներինը անհաս բարձունքն է: Արծիվներինը ճախրն է հավերժի»: Որքան էլ փորձ արվի սառնասրտորեն մոտենալու գրքին, միևնույն է, այն էլ մեր օրերում, հատվում է անհարիւրության սահմանը: Բայց սա դեռ հարցի մի կողմն է: Մյուս կողմից էլ՝ այն, ինչի մասին խոսք է գնում՝ թե՛ առաջին, թե՛, ցավոք, արդեն Արցախյան երկրորդ պատերազմի հերոսների՝ կենդանի,

թե հավերժացած, այլ լեզվով չէր կարելի խոսել, քան բուն նյութը ներհյուսելն է բանաստեղծությանը, քան ժամանակին զարգացող իրադարձությունների գնահատականը բանաստեղծուհու գրչին բնորոշ ընդմիջարկումներով ներկայացնելն է, ինչը համազոր է վավերական-փաստական նյութը գեղարվեստորեն ներկայացնելուն:  
Մեր ուշադրությունը բևեռվեց գրքի այս առանձնահատկությամբ՝ հնարավորության սահմաններում տալ գնահատականը այլ տեսանկյունից, այն է՝ ոչ թե իրականության ներսում բանաստեղծությունը, այլ բանաստեղծական ներքին հյուսվածքում իրականության բացահայտումը: Ուրեմն, փաստական նյութի վավերագրությունը թողնելով ընթերցողին, այստեղ միայն արժևորվել է Հրանուշի՝ վավերագրությունը բանաստեղծորեն ներկայացնելու հաջողված արարումը: Ի դեպ, նույն սառնասրտության սահմաններում իրավիճակը գնահատելու գրեթե անհնարինության «խոսք» նրան հաջողվել է հաղթահարել հենց բանաստեղծությամբ: Նշանակում է՝ բանաստեղծությունն այստեղ միաժամանակ մի քանի գործառնություն է հաջողությամբ կատարել՝ գեղարվեստորեն լուծելով հատկապես բոլոր ժամանակների համար արդիական ծանրագույն նյութի սահուն մատուցումը, նաև փաստը ներկայացնելով գեղարվեստորեն:  
«Կյանքը՝ ցանկալի ու դաժան,

մարդը՝ տիրակալն ու ստրուկն այս ամենին: «Օրհասական պահ: Կյանքի ու մահվան սահմանագիծ»... հայրենիքի գավակներ, որոնք կամ հերոսացել են Ապրիլյան քառօրյա մարտերի ընթացքում, կամ, ցավոք, անզամ հրադարից հետո, իսկ մյուսներն էլ այսօր մեր կողքին ապրում և արարում են՝ իրենց պայքարի հերոսական դրվագներով դառնալով հզորության ու անպարտելիության օրինակ մեր օրերի ու սերունդների համար:  
«Եվ որքան էլ ժամանակն իր հետ նոր ծաղկունք ու սաղարթ է բերում, միայն ծառը գիտի կորստի ցավը, որ ամփոփում է կեղևի ներսում ու երբեմն՝ թուլության պահերին, դուրս է հանում խեղձ տեսքով: Ծառ է, հպարտ է, ծնկի չի գալիս և չի տապալվում, մինչև որ Տերը երկնքից կանչի»: Փոխաբերության բանաստեղծության ևս մեկ ընդմիջարկում-միտք, որով հեղինակը կարողանում է դյուրին դարձնել դժվարին էջերը բացելը:  
«...Արհավիրքը գալիս, իր անողորմ ձեռքով խլում ու տանում է, իսկ Անահիտ դիցուհին նոր շիվեր ու ծաղկունք է նվիրում, որ հայի օջախը միշտ շեն մնա ու կանգուն»:

Բան. գիտ. թեկնածու,  
դոցենտ  
Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ԸՆԿԵՐՆԵՐԸ

Լյուսնահար Ամեդեո Տորտին ու իր կինը պատրաստվում էին սուրճ խմելու: Երեխաներն արդեն գնացել էին քնելու:  
Ամուսինները լռում էին, ինչպես որ հաճախ լինում է, ու մեկ էլ կինն ասաց. -Ուզու՞մ ես մի բան ասեմ...ամբողջ օրը մի տարօրինակ զգացում ունեմ...Ասես այս երեկը մեր տուն է գալու Ապախերը:  
-Եղբայրի բաներ մի՛ ասա, թեկուզ կատակով,-պատասխանեց ամուսինը նեղվելով: Տոնի Ապախերը՝ ջութակահարը, որ իր վաղեմի մոտ ընկերն էր, մեռել էր քսան օր առաջ:  
-Գիտեմ, գիտեմ, որ սարսափելի է,- ասաց կինը,- բայց այդ մտքից ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել:  
-Է՛, երանի՛...շնչաց Տորտին մի աղոտ մտահոգությամբ, սակայն չուզեցավ խորացնել այդ խոսակցության նյութը՝ լուռ թա-

ղիսով բռնաճիտ  
փահարեց գլուխը:  
Դարձյալ լռեցին: Ժամը տասին քառորդ էր պակաս: Հնչեց դռան զանգը: Երկար, համառորեն:  
-Տեսնես ո՞վ է այս ժամին,-ասաց կինը: Նախասրահում լսվեց Ինեսի քարշ եկող քայլերի, հետո բացվող դռան ձայնը, հետո մի հապճեպ խոսակցություն: Աղջիկը շատ գունատված ներս մտավ փոքրիկ ճաշասենյակ:  
-Ինե՞ս, ո՞վ է,- հարցրեց տիկինը:  
Աղախինը դարձավ տանտիրոջը՝ շնչալով:  
-Պարոն Տորտին, մի րոպե դուք եկեք այստեղ...Եթե իմանայիք...  
-Բայց ո՞վ է, ո՞վ,- ջղայնացած հարցրեց տիկինը, թեև արդեն կռահում էր, թե ով էր:  
-Ինեսը կռացավ, ինչպես մեկը, ով գաղտնի բաներ ունի ասելու: Խոսքերը նրանից դուրս ելան մի շնչով:

-Պարոն...պարոն...պարոն՝ Տորտին. եկե՛ք...մատարո Ապախերն է վերադարձել:  
-Ի՞նչ ես ասում,- ասաց Տորտին՝ նեղսրտած այդ բոլոր խորհրդավոր բաներից, ու ասաց կնոջը:  
-Ես գնամ տեսնեմ...դու մնա այստեղ:  
Դուրս ելավ խավար միջանցք, խփվեց ինչ-որ կահույքի, միանգամից բացեց նախասրահ տանող դուռը:  
Այնտեղ մի քիչ երկչոտ տեսքով կանգնած էր Ապախերը:  
Առաջվա Ապախերին այնքան էլ նման չէր. ուրվապատկերի լրդվածության պատճառով նա մի տեսակ պակաս նյութական էր թվում:  
Ուրվակա՞ն էր: Գուցե դեռևս ոչ: Գուցե դեռևս ոչ լրիվ էր ազատվել այն բանից, ինչը մարդիկ անվանում են նյութ: Ուրվական, բայց որոշակի նյութականության մնացուկով: Իր սովորության համաձայն՝ գորշ գույնի զգեստ էր հագել, կապույտ գույ-

նով վերնաշապիկ, կարմիր - կապույտ փողկապ, իսկ թաղիքե փափուկ գլխարկը նյարդայնորեն ձմռթում էր ձեռքերի մեջ (հասկանալի է, զգեստի ուրվական, փողկապի ուրվական, և այլն):  
Տորտին տպավորվող մարդկանցից չէր: Ընդհակառակը: Սակայն մնաց տեղում կանգնած, առանց ծայտուն հանելու: Հո հանաք բան չէ՞ր տեսնելը, թե ինչպես է տանդ մեջ հայտնվում վաղեմի ու սիրելի ընկերը, որին քսան օր առաջ են գերեզման դրել:  
-Ամեղեո,- սկսեց խեղճ Ապախերը՝ ասես ցանկանալով իմանալ, թե ինչ է դիմացինը մտածում: -Ղու՞, դու՞, այստե՞ղ,- գրեթե հարձակվեց Տորտին, քանզի հակադարձ ու խռովահույզ զգացումներից իր մեջ ծնվում էր, ով գիտե ինչպես, միայն զայրույթի պոռթկում: Մի՞թե մեծ միջադրություն չէր կորցրած ընկերոջը գտնելը:  
Աղախին հանդիպումն իրական դարձնելու համար մի՞թե Տորտին կամովին չէր տա իր միլիոնները: Այո՛, ինքն այդպես կա-

ներ՝ առանց մի րոպե վարանելու: Ամեն գոհողության պատրաստ էր: Բայց այդ դեպքում ինչու՞ հիմա այդ երջանկությունն ինքը չէր զգում: Ինչու՞, դրա փոխարեն, զգում էր մի տեսակ նեղվածություն: Այնքան ապրումներից հետո, այնքան ողբերից հետո, այդքան գլխացավանքներից, որ պարտադրում են, այսպես կոչված, պայմանականությունները, հիմա պետք էր վերսկսել սկզբից: Բաժանման օրերի ընթացքում կորցրած ընկերոջ պատճառած ցավը լրիվ անցել էր, ու հիմա դրանից ոչինչ չէր մնացել:  
-Ղե՛ այդ, ես եմ,- պատասխանեց Ապախերը՝ ավելի ձմռթելով ֆետրե գլխարկը: Բայց ես...լավ գիտես, մեր միջև հաճոյախոսություններ չեն կարող լինել...գուցե նեղություն՞ն եմ պատճառում... -Նեղություն՞: Սա դու անվանում ես նեղություն՞,- վրա բերեց Տորտին՝ զայրույթի պատճառով արդեն ափերից ելած: -Վերադարձել ես, չեմ ուզում անզամ իմանալ որտեղից, ու այս իրավիճակում...








ՀԱՅԿ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Վերջերս լույս է տեսել Հայկի «Կյանք՝ մի սիրտ այն կողմ» գիրքը: Հեղինակը ծնվել է 1998 թ. Գյումրիում: Սովորում է Երևանի պետական համալսարանի սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության բաժնում:



ԶԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԿՅԱՆՔ

Զինվորը պառկած էր բաց աչքերով, ծանր շնչում էր հոգնածությունից կամ վախից՝ սպանվածի դեմքից երկու մետր հեռու: Երթուղիները, հոնքերը, թարթիչները, զոհված մարդու քիթը ծածկված էին ցրտահարությամբ: Երբ նա ցրտահարվեց այս փոսի մեջ, դեմքի գծերը շատ սուր էին թվում, շատ ավելի սուր, քան երեկ երեկոյան, երբ պատմած անեկոլոսից հետո ժպտաց վառ դիմազծերով:

Մեկ... երկու... երեք... Տղայի շրջակայքում ակամամետի փոքր պայթյուններն սկսեցին ծափահարել: Մեկ այլ ական պայթեց աջ ձեռքին շատ մոտ: Նա ազդրի մեջ սուր ծակոկոց զգաց, գլխին հարված ստացավ, սաղավարտը զանգի պես հնչեց պատռված, ծածկված բաճկոնի ճեղքից... Զգիտես ինչու, դժվար էր հաջորդ հառաչը, զինվորը փորձեց շնչել, բայց մի պահ հետո ամբողջ աշխարհը լուրջ տարբեր ուղղություններով: Տղան մեջքի վրա պառկած էր: Հողի ու ձյան կեղտոտ կտորներ թռան նրա ու երկնքի արանքում: Տղան կրկին ուզում էր խորը շունչ քաշել, կարծես թե օդը քիչ էր. կեղտի փոքր կտորներ էին հայտնվել նրա քթի մեջ, և ստիպված էր փռչել: Ցավ կրակվեց ինչ-որ տեղ կրծքի մեջ... աջ ձեռքի տակ: Փորձեց բարձրացնել աջ ձեռքը տեսնելու համար՝ որտեղ է վիրավորվել: ...Զինվորը բացեց աչքերը,

նրա գլխավերևում ամպամած երկինքը, կրակոցները խառնված էին արկերի ու թշնամու ութուներկու միլիմետր տրամաչափի դաշտային ականների պայթյունների հետ: Նա փորձեց կտրուկ նստել, բայց ցավը ներթափանցեց ամբողջ մարմինը՝ ստիպելով նորից պառկել ու կտրուկ հառաչել, բայց հառաչանքն ավելի սաստկացրեց ցավը: Մի քանի զգույշ շարժում անելով՝ հեշտությամբ, արմուկներով աշխատելով, բարձրացավ խրամատի գագաթը: Աջ եզրում կատաղի մարտ էր, պարզ էր՝ թշնամու հակազորը խեղդվում էր: Նայեց ճակատամարտին, ապա՝ շտաբին, որը չորս հարյուր մետր հեռավորության վրա էր... ձյունոտ դաշտի միջով: Հաջորդ շարժումով զինվորը փորձեց հասնել խրամատի մյուս կողմը. ցավը նորից մարմինը շանփրեց ընդհուպ նրա աչքերի աստղերը, բայց այն դառնում էր մի տեսակ ծանոթ: Գիտակցության վերջին պահին հայտնվեցին սպիտակ, քողարկիչ վերարկուներով զինվորներ: Նրանք դուրս ցատկեցին կարծես ձյան տակից, կտրուկ շրջեցին մեջքի վրա և կոպիտ թևերի տակ քարշ տվեցին իրեն... -Վերջ,- գոռաց նրա ուղեղը: Տղան ցավից կորցրեց գիտակցությունը: Հաջորդ բանը, որ տեսավ, գեղեցիկ բուժքրոջ կենտրոնացած դեմքն էր. նա ժպտաց, և գիտակցությունը նորից գնաց: Անցավ մի քանի օր, արդեն հոսպիտալում էր և որոշեց նամակ գրել տուն: Զեր սիրուն նամակներ գրել, բայց ստիպված էր ինչ-որ բան գրել: Վնասվածքի մասին, կարծում էր, չարժե, և նա ժամ առ ժամ հետաձգում էր գրելը: Ասես ինչ-որ մեկը բռնել էր ձեռքը: Վերադառնալով հիվանդանոցի բակից (իջել էր քայլելու)՝ նա անցավ հարևան սենյակի մոտով: Հանկարծ բարձր մի ծանոթ ձայն զարմացած գոռաց իր ազգանունը: Կանգ առավ ու ապշած նա-

յեց սենյակի անկյունից գոռացող տղամարդուն: -Պարոն լեյտենանտ (նա հանգիստ մոտեցավ իր անմիջական հրամանատարի մահճակալին), Դուք առանց համազգեստի եք, և ես Ձեզ միանգամից չճանաչեցի, և հա՛... առանց ականջի: Հրամանատարը զարմացած, նույնիսկ ինչ-որ տեղ թաքցնելով վախով նայեց զինվորին: -Բայց դու հերոսաբար զոհվեցիր ակամամետային հարձակման ժամանակ, ամբողջ գունարտակի դիմաց, ես ինքս տեսա՝ ինչպես ես պատռվել ականից. մահվանը լուրը ուղարկել ենք հայրենի քաղաք և պարզատրել հետմահու: Դատարկվեց տղայի հոգին: -Ստացվում է՝ ես մահացա՞ծ եմ համարվում տանը,- հարցրեց ինքն իրեն: Մինչև իսկ տեսավ ինչպես է մայրը լալիս՝ զոհն ու սրբելով արցունքները: Չախ ձեռքում պահում էր մի կտոր թուղթ ու մատիտ, որ հենց նոր էր խնդրել բուժքրոջից: «Դե՛, ի՞նչ նամակ եմ գրելու հիմա... իսկ եթե իսկապես մեռնեմ... երկրորդ անգամ,- խորհեց նա և հայացքը հառեց հատակին.- մայրս չի դիմանա»:

ԽՈՐՀՐԴՎՈՐ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Նրան սպանված են գտել իր աշխատասենյակում: Ատրճանակը ձեռքին պառկած էր կանաչ գորգի վրա: Իր իսկ ցանկությունների և ճաշակի համաձայն կահավորված աշխատասենյակը մուգ կանաչ երանգներով էր: Խիտ կանաչ վարագույրը ծածկում էր իսկապական պատուհանները, գորգը խլացնում էր ոտնաձայները: Պատերը շարված էին ընդարձակ ակվարիումներով, որոնցում ծուկ չկար, միայն ջրիմուռներ ու մարջաններ կային, նաև ծովան-

կարներ՝ շրջանակների մեջ: Ընդհանրապես վերևում մերկ ծովն ու երկինքն էին. ո՛չ նավեր, ո՛չ ծովային մարտեր, ո՛չ առասպելական տեսարաններ, ո՛չ էլ ձկնորսներ... Լոկ ծովն է տարբեր եղանակներին, տարբեր լուսավորությամբ: Դա հաճելի էր նրան, ով այժմ պառկած էր այստեղ: Գրություն գրան սեղանին: Մի կտոր թղթի վրա բառերը գրված էին համարձակ. «Այլևս չեմ անի»: Այս ինքնասպանության նոտայի որոշ մանկամիտ, աղաչող և պարզ հնչերանգը զարմանալի էր: Ասես ինչ-որ դատապարտելի փոքրիկ բան է արել, և այժմ պատժի առջև փորձում է մանկական եղանակով՝ խոստովանությամբ, այլևս չանել դա: Բայց կոնկրետ ի՞նչ չանել: Նկատի ուներ իր արած վատ գործերը: Միգուցե հենց այս գործողությունների համար մեղքի զգացողությունն էր, որ նրան դրդեց ինքնասպանության: Եվ նա խոստանում է հետագայում նման բան չանել: Կամ ինքնասպանությունն այդ հանցավոր կատակն է, որի համար նա ներում է խնդրում նման մանկամիտ ու անօգնական ձևով՝ ես այլևս ատրճանակով չեմ խաղալու... Կամ վերջապես նա պարզապես ասում է, որ ինքը եղել է, բայց այլևս չի լինի: «Ես այլևս այստեղ չեմ լինի»: Երևի այս կերպ պետք է հասկանալ այս հաղորդագրությունը՝ «Իմ ես»-ը այլևս չի լինի...»: Կամ «Ես այլևս չեմ լինի...»: Ասես ինչ-որ մեկը կարող է վախենալ, որ նա կվերադառնա, որ նա դեռ «կլինի», ուստի քաղաքավարի հավաստիացնում է բոլորին, որ դրանից վախենալ չարժե: Ամեն դեպքում այս անձը շահեց կամ պարտվեց իր դեմ սկսված պատերազմում: Այս պատերազմն այլևս չի լինի: Այստեղ կանաչ ակվարիումներով սենյակում, մի քանի ժամ առաջ ստորագրվեց տարածքների հանձնումը, և հաստատվեց հաշտություն: Եվ նա խոստանում է հետագայում նման բան չանել...

ՍՐԲԱԶԱՆ ԴՈՎ



Մոֆյա Մարգարյան

Ծնվել են 2002 թ. Եղեգնաձորում: Մանկուց ապրում և ստեղծագործում են Գյումրիում: Սովորում են Գյումրու պետական բժշկական քոլեջում: Գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունն ինձ համար խոհերս ու ապրումներս, զգացումներս ու հույզերս թղթին անկեղծորեն հանձնելու անկրկնելի հնարավորություն է:

ՕՏԱՐ ԵՐԿԻՆՔՆԵՐ

Կանցնի հարյուր տարի... Երբ աշխատանքները մարդկանցից կհանգստանան, Երբ սառած վերարկուները մարդկանց կգրկեն, Երբ հագուստները մարդկանց կզննեն, Ոչինչ չի փոխվի... Ճանապարհները կրկին կկարոտեն քայլերին, Քայլերը՝ ոտքերին, հերոս ոտքերին, հերոսի ոտքերին: Երբ մահը կմեռնի մեր փոխարեն, Ոչինչ չի փոխվի... Հարսները կրկին կփախչեն եկեղեցիներից, իսկ ոմանք տեր ու հնազանդ կխաղան... Մանկան ճիչեր կլսվեն, երկինքը կճաքի հրավառությունից: Կանցնի հարյուր տարի, ու կյանքը պատերազմներ կլիսի, Մահից կդողան, ապրել կերագեն պատերազմները: Կանցնի հարյուր տարի... Ձեռքերը ձեռքեր կբռնեն, Իսկ ձեռնոցները կկարոտեն սառած մատներին: Երբ պատերազմները կվախենան կյանքից,

Հողին կհանձնեն մահը... Կանցնի հարյուր տարի... Մարմինը կդիպչի փամփուռներին: Երբ կյանքը մեռնի, կհասկանան երեկն էր մեղավոր... Կանցնի հարյուր տարի, ոչինչ չի փոխվի... Նորից կուշանան դասից, կյանքի դասից, Մինչդեռ իրենց հասակի հերոս զինվորները Մշտապես կուշանան դասից, կյանքից, Կանցնի հարյուր տարի, ամեն ինչ կփոխվի՝ Երագները, երակները, երկինքները... Բայց մայրերը, միևնույնն է, սպիտակ չեն հագնի:

ԱՇՈՒՆ Ե, ՀԵՐՈՍԱԹԱՎ Ամենամեծակ պահերին, Երբ փողոցներով կթափառես Լռությունից խոսուն դարձնելու նպատակով, Կտեսնես՝ հերոսաբափ է, աստղաբափ է,

Իսկ միայնությունդ չափ ունի... Ամենապայծառ եղանակին մոռալություն կզգաս, Դուրս կգաս փողոց՝ դրսից տաքանալու հույսով: Կնայես երկնքին, կտեսնես՝ ամպերը հերոսներ են դարձել, Իսկ երկնքի պատերը տարօրինակ դեղին են... Կմրսես, հոգիդ կփշաքաղվի... Ամենախաղաղ պահերին կթվա, թե ամեն ինչ մոռացվել է... Բայց կտեսնես, երկինքը լցվել է. Չի կարող այդքան հերոս իր մեջ պահել... Սառը կարոտ կզգաս, կխեղդվես, շունչդ չի հերիքի... Կհիշես, որ կարոտդ օրագրիդ էջերում ես թողել, Որ ժամանակին կարոտդ էլ մրսելով Տեղավորվել է տաքության մեջ փամփուռների... Իր անունով գրել... Հետո... Խորը սառնություն կզգաս, Սպասումներով լցված դատարկություն... Իսկ միայնությանդ չափը անմիավոր մի սանդղակ է...



### ԱՆՈՒՇ ՀԵՔԻՄՅԱՆ

...պիտի հերքել գոյությունս ու առանց ցնցոտիներս հագնելու նետվելի ունայնության գիրկը. մի վայրենի, ողորմելի քամի դառնայի, ինքս ինձնից ցրտահարվելի, հավվելի, ինքս ինձնից մաշվելի, կաշվե թախիծ դառնայի, ինձ նվիրելի հեռուներից վերևներին, ինքս ինձնից փախչելի, ներկվելի մերկ պատերին, արծազանքելի իմ հետևից, իմ հետևից վազելի, հասնելի ու սայթաքելի իմ վրայից:

#### ՉԻՄԱՆԱԼ ԺԱՄԱՆԱԿԸ

չիմանալ ժամանակը, չսպասել. լինել ամենքին գերի, լինել բոլորին սիրահար. դառնալ սանձահար, փախչել փախուստից. անտարբեր մնալ դառնությունների. դառնալ վայրենի, հետո քնքանալ, մե՛ղմ քամի դառնալ ու գնալ հեռու... հեռու հողմերից, հողերից ներքև. ապա հող դարձած «վերադարձ» ճչալ՝ իբրև մի արև. լինել չսպասված, լինել անտեղի և լուսարձակել ցասմամբ կատաղի.

հեռանալ կրկին. չլինելու չափ պարզապես լինել, լինել անդադար. հետո քշանալ, դառնալ մեկ քառորդ, ձգտել գրոյի, ձգտել գրոյի կամ չիմացության. չիմանալ ժամանակը, չլինել:

\*\*\*

կարծես թատրոն լիներ.

իմ առջև պառկած էր հանդիսատեսը. ինձ տրվել էր դերս. տեղը տեղին պատրաստվել էի. մի բան էր պակասում միայն՝ առաջանալ հետնաբեմից ու մտնել դերի մեջ ու խաղալ ու ապրել ու անել ամենը, ինչ կարող եմ անել.

հեշտ չէր. բավական երկար ժամանակ էի անցկացրել հետնաբեմում՝ բոլոր տեսակի հանդիսատեսներից անդին, ամեն տեսակի մարդկանցից անջատ, միայն ես ու իմ աշխարհը, իմ հետնաբեմը, իմ, թերևս, այդքան նոսր պատկերացրած կյանքը.

ինձանից ոչինչ չէր կախված. ուշ էր հրաժարվելու համար. պահը եկել ու թակում էր դուռս.

ես դեռ սպասում էի. ինչ-որ բան ուղեքսս ամուր գամել էր հետնահարթակին ու պահանջում էր մնալս.

չեմ հիշում՝ ինչպես ազդարարվեց սկիզբը. ինչ-որ անպատեհ լույսեր էին վառվում կամ մարվում. մերթ կտրվում էի իմ հետնաբեմից ու փորձում պատկերացնել իրական դառնառատ աշխարհը, մերթ կպած մնում էի ինձ չափից դուրս հարազատացած չորս պատերին, ցանկանում հրաժեշտ տալ, բայց...

- գալիս է, ահա, գալի՛ս է...

ես փորձում էի հնարավորինս ձիշտ ընկալել շրջապատողներիս ու լռում էի. հետո հասկացա, որ նրանք իմ բացարձակ ճիշն են պահանջում, լացը, սեփական հետնաբեմից

այլևս ընդմիշտ կտրված լինելու ցավի ոռնոցը.

ու ես պոռթկացի. ինքս էլ չէի հասկանում՝ դա բղավո՞ց էր, լա՞ց, ուրախության անպատճառ նուպա՞, թե՞...

մի բան էլ եմ լավ հիշում. երբ բժիշկը մորս ահագին հոգոցով ասաց. - ծնվեց:

\*\*\*

մենք ստեղծեցինք այս երգը, և այն կործանեց մեզ.

եթե մենք միջնադարում ապրեինք, ես անպայման ամեն օր մի քանի մղոն կանցնեի քեզ հասնելու համար, միայն թե կիսատ լինելու զգացումից ազատվեի. և չնայած ինձ հակացուցել են քայլել դեպի քեզ, ես ուղղով կգայի, որովհետև, այնուամենայնիվ, շատ եմ սիրում ձիերին. քարքարոտ փողոցներում կմաշեի կաշիս ու ոսկորներս, և կհուսայի տիեզերքում ինչ-որ տեղ տեսնել քեզ, որովհետև մեր հանդիպումները հիմա իսկական պատահականություններ են.

ես այստեղ եմ, որպեսզի սովորեցնեմ զգալ.

արի ձևացնենք, թե ամառ է, կյանքը՝ քաղցր բաների հսկա տոպրակ, մենք վայելում ենք իրար և ամեն պատահող, մեր մաշկը համեղ է ու կաշուն՝ մեղրի նման, մենք պոկ չենք գալիս իրարից, և պոկ չենք գալիս մեզանից ճանձերը.

ես սկսում եմ բողբոջել՝ ինքս էլ չեմ հասկանում՝ ինչի համար. կծկումներից սրտիցս մանուշակագույն փոքր ծաղիկներ են դուրս ու ներս աճում. «մի օր, սիրտ իմ, դու կխաղաղվես».

երբեմն այդ ճանձերը աննկատ մոտենում են, երբ ես ամբողջովին տարված եմ քեզանով, ծակծկում են բողբոջներս, փքվում են մեղրով ու նեկտարով և ապա տրաքում են. հետո գալիս են նորերը՝ իմ մասին հոգ

տանելու պատրվակով. այս ճանձերն ինձ իսկապես նյարդայնացնում են, չգիտեմ՝ դու էդտեղ ոնց ես դիմանում...

երեկ՝ խոնավ աշնանը՝ մեր թեյ խմելու ժամին, իմ հողերից հսկա փշոտ ծաղիկներ դուրս եկան. դրանք ինձ մի փոքր սարսափեցրին. ընդհանրապես, վերջերս, նույնիսկ բացարձակ մենության մեջ ես վախենում եմ, սիրելիս, վախենում եմ ասել, որ կարոտել եմ քեզ, որովհետև դու երևի իմ սիրելին չես այլևս.

իմ ձեռքերն այնպես ծիգ են կապվել քո հեռացումով. հիմա ես չգիտեմ առանց քեզ ինչպես կանխեն այս ծաղիկների աճը կա մ գոնե քաղեմ. երևի սրանք են այդ անտանելի ցավի պատճառը. երևի սրանք են.

քեզանից հետո իմ մասին էլի հոգ տանողներ հայտնվեցին. հավանաբար միշտ էլ եղել են, բայց դու անգթորեն քշել ես բոլորին. սրանք ավելի մեծ են. օրուգիշեր անդադար տոգում են ու բռռում, ինչ-որ բան են մեկ փսփսում, մեկ գոռում ականջիս տակ. երևի քո սուրհանդակներն են, և ոչ թե իմ նոր սերերը. այխր ես ճանձերեն բոլորովին չեմ հասկանում.

ինչևէ, սրանք երևի ամբողջ օրը թափառում են կեղտի մեջ, քո մասին երազներ են հավաքում այդ ուրիշ տեսակ նեկտարներից և ինձ են հասցնում գիշերը. ես նրանց բանի տեղ չեմ դնում.

իմ այս նոր սենյակում փոքր պատուհան կա. միշտ փակ եմ պահում, որ քո ճանձերը չմտնեն կամ դուրս չգան հանկարծ.

ավա՛ղ, մենք միջնադարում չենք ապրում, սիրելիս, չնայած

դու երևի իմ սիրելին չես այլևս.

փաստորեն սա է այդ անտանելի ցավի պատճառը:

\*\*\*

...տուր վճիռդ արդեն՝ կամոքե՞ս ցավն իմ հին, թե ոչ՝ ես կվճռեմ ու վերջ կտամ նրան: Ֆրանսուա դը Մալերբ

ես կրում եմ կայենի նշանը ճակատիս. մի փուշ, որ խալի տեսքով ժառանգություն թողեցին ինը մայրերիցս երկուսը.

ես սիրում եմ պատերը այն քառակուսու, որի մեջ ծաղկում եմ. սիրում եմ այս սև սուր քարերը, որ ճանկում են ուղեքսս և արյունվա անում. արարում մեկ գործողությամբ.

ահա ծաղիկներ փշոտ. ահա փշեր՝ խրված մատներին. ահա փշեր՝ կոկորդիս շարված. հմուտ նետածիգի հսկա դիպուկ փշեր.

դու կրակում ես ճիշտ. ես վերջին անգամ եմ սիրում այն, ինչով հարվածում են մեջքիս, իսկ քեզ՝ զուցե նախավերջին.

ես վերջապես սանրում եմ խճճված մազերս և այս փշերի մեջ ավելի խորը խճճվում.

վերքերի համար ժամանակը կանգնում է.

ժամանակը կանգնում է կոկորդիս. մատներս ներս եմ տանում ու դուրս քաշում որոշ մանր փշեր. խոշորները մնում են ներսում՝ շարունակելու արարողությունը.

փշերը մատներին մեջ են հիմա. վերքերը չորանում են դրսից, ներսից մեռնում են մաշկը.

փախուստը ելք է, ճանապարհ և ևս մեկ քայլ դեպի ներս.

ես պետք է շատ հեռանամ ինձնից քեզ մոտենալու համար. ...տուր վճիռդ արդեն՝ կամոքե՞ս ցավն իմ հին...

ահա կանաչ ճամփաներ՝ սուրսայր քարերով. ահա փշե ծաղիկներ քո ձեռքին...

**ԵՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ** ԳՊ Շիրակի մարզային բաժանմունքը և «Եղեգան փող»-ի խմբագրակազմը շնորհավորում են թարգմանիչ Գառնիկ Մելքոնյանին, գրականագետ, բան գիտ. թեկնածու Կարինե Մարտիրոսյանին և բանաստեղծուհի Անուշ Զեքիյանին Գրայաստանի գրողների միության անդամ դառնալու կապակցությամբ: Գետայսու ևս թող բեղուն լինի ձեր

Հրատարակված է ԳՊ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Գրայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543 տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Գովհաննիսյան Գրանկարգչային ձևավորումը՝ «Էլտրադո Դրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մամուլ